

թանձրամած, եւ տեսաներ ի տեսլեան, զի այգի մի էր մեծ եւ վայելուչ, քաջաբեր լի պտղով. եւ խոզք երեք անգեալ էին յայգին, եւ մտեալք ի ներքս ի յայգին՝ ապականեին զայգին եւ բրէին: 14 Պատառէին բազում ունջս որթոյ, արմատաքի խլէին եւ զտաշտն գլխովին եւ զբազուկ ընջովին, եւ մեծամեծ ապականութիւնս ի ներքս գործէին: 15 Եւ մատուցեալ էին այգեգործքն, ջանային եւ ոչ կարէին հանել զվնասակար խոզսն յայգւոյ անտի: 16 Ապա զաղաղակ հարեալ գոչէին առ Բարսիլիոս, եւ ասէին. Եթէ ոչ դու, Բարսիլիոս, եկեսցես, ոչ ոք կարէ հանել զխոզս յայգւոյ աստի, եւ ոչ մեծ ապականութիւնս դադարեցէ. աճապարեա եկ հասիր, զի տակաւին աւասիկ վնասս մեծամեծս առնեն: 17 Ապա մատուցեալ Բարսիլիոս՝ հաներ զվնասակարս զխոզսն յայգւոյ անտի, եւ կազմեր զխախտածն:

18 Եւ զարթեալ սքանչելին Բարսեղ, եւ զարմացեալ ընդ այն տեսիլն, էր մտախորհ. եւ խորհեր ընդ միտս իւր վասն տեսլեանն՝ թէ զինչ իցէ. եւ անդէն հասեալք մատուցանեին նմա զթուղթն առաքեալքն ի Կեսարիայ քաղաքէ Եւսեբի եպիսկոպոսի: 19 Այլ իբրեւ ընթերցաւ, ինդայր եւ ուրախ լինէր. զի գիտաց թէ յՆստուծոյ պատրաստեցաւ կոչել զնա ջատագով ճշմարտութեանն առ ի տալ պատասխանի: 20 Յարուցեալ փութանակի զնաց զհետ կոչելեացն թղթին, եւ չոգաւ առ եպիսկոպոսն Եւսեբիոս: 21 Եւ իբրեւ խորհեցան ընդ միմեանս զարժանն, ասաց Բարսիլիոս ցեպիսկոպոսն Եւսեբիոս, զի ինդրեսցէ ի կայսերէ իշխանութիւն՝ զոք յերիցանց տանել ընդ իւր: 22 Եւ մտաներ Եւսեբիոս առ կայսրն, ինդրէր ի նմանէ եւ ասէր. Երկուս ածեր ինձ ախոյեանս, թո՛ղ եկեսցէ մի ոք ընդ իս յերիցանց իմոց: 23 Եւ հարցանէր կայսրն ցարիանոս եպիսկոպոսն, եւ յանձին կալան տոքս Եւսեբի քանի՞ ածցէ ընկերս ընդ ինքեան, յորժամ գայցէ յատեանն:

24 Իսկ իբրեւ ժամ ատենին հասաներ, առեալ կայսերն զեպիսկոպոսն Եւսեբիոս, եւ ընդ նմա երանելին Բարսիլիոս երիցապետն, եւ երկու ախոյեանքն հակառակութեանն՝ որք ի կողմանէն կուսէ սատանայի էին, այս ինքն արիանոսք չեպիսկոպոսքն, եւ մտին ի բանից ի քննութիւն հակառակութեան վասն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ, եթէ իցէ ծնունդ եւ որդի ի բնութենէ Զաւր Աստուծոյ, եթէ ոչ: 25 Ապա Զոգուով Սրբով լցեալ լինէր երանելին Բարսիլիոս, որ կայր զկնիագոյն եպիսկոպոսին Եւսեբի. եւ սա գրէր վկայութիւնս ի գրոց յԱրարածոց ի սկզբանէ յարիւնաց եւ ի մարգարեից եւ յառաքելոց եւ յամենայն աստուածաշունչ գրոց. յայտ առնէր եւ ցուցանէր, եւ զերկուսեան ախոյեանսն սատանայի կարկեալս ըմբռնեալս ամաւթապարտեալս հանդերձ թագաւորան կացուցանէր:

1 *Յերիս օրինակս՝ զի քանի*